ԵՐԵՎԱՆԻ ՀՐԱՉՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

0009 ք.Երևան, Իսահակյան 28
+374 10 52 47 03
www.ydt.am
էլ. փոստ: ydt68@mail.ru

№ 0-17

<<27>> 09 2021թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ

ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԱԲԳԱՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի Մուրադյան,

Իմ և թատրոնի աշխատակազմի անունից շնորհակալություն եմ հայտնում Ձեզ և Ձեր կողմից կորոնավիրուսի վարակի տարածման կանխարգելման և նրա հետևանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների և մասնավորապես թատրոնի աշխատակազմի հետ հանդիպելու հնարավորության համար: Պետք է նշենք, որ Ձեր նման նվիրյալները այսօր շատ պահանջված են հայ ժողովրդի կողմից:

Չնայած Ձեր չափազանց ծանրաբեռնվածությանը ժամանակ գտաք գալ մեր թատրոն և պատասխանել մեր աշխատակիցներին հուզող հարցերին և այդ ամենը արեցիք մեծ սիրով:Մեկ անգամ ևս շնորհակալություն Ձեզ /COVID-19/ կորոնավիրուսի վերաբերյալ մատչելի և մանրամասն տեղեկատվություն տրամադրելու համար, որը իր դրական նշանակությունը կունենա չկողմնորոշված մարդկանց ճիշտ ուղղորդելու համար:

Հարգանքով՝

Թատրոնի գեղարվեստական ղեկավար և տնօրեն

ՀՀ ժողովրդական արտիստ ԱՐՄԵՆ ԽԱՆԴԻԿՅԱՆ